

**ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԼՈՒԾԸ**  
**ԵՒ ՆՐԱ ԲՈՆՈՒԹԵԱՆ ՆԵՐԲՈՅ ԾԱՂԿՈՂ**  
**ՀԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԸ.**

«Արարատ»ի ներկայ թուականի «յունուար» տետրակում հրատարակելով Մ. Աթոռի մատենադարանի Հ. 1209=1239 ձեռագրի յիշատակարանը՝ դորան կցած բացատրութիւնների մէջ մատնանիշ էինք արել, թէ ինչպէս է պատկերացնում այդ յիշատակարանը Հայաստանի դրութիւնը Օսմանեանց յառաջընթաց Անշուկեան հրոսակների օրով, և ապա՝ ինչպէս արտայայտում մեր հայրերի վրայ նոցա թողած ծանր տպաւորութիւնը։ Այս անգամ տալիս ենք մի ուրիշ յիշատակարան՝ դրի առած այն օրերում, երբ Օսմանեան հարստութիւնը իւր փառքի գագաթնակէտին էր հասել, երբ արեւելքի քրիստոնեաներին թւում էր, թէ կիսալուսնի վերջնական յաղթանակն են տեսնում քրիստոնէական խաչի դէմ։ Բիւզանդական կայսրութիւնը 8 դար շարունակ ամուր պատուար էր հանդիսացել՝ ամբողջ արեւելքը հեղեղելուց և քրիստոնէութեան ընդարձակ անդամատանները ողողելուց յետոյ, դէպի քրիստոնեայ արեւմուտք խուժող մահմեդական վիթխարի հոսանքի դէմ։ Սաչակրաց արշաւանքներով օգնութեան էին եկել և մօտ 2 դար հսկայական պայքար մղել արեւմտեան քրիստոնեայ ազգերը, սակայն մահմեդականութիւնը խորտակել էր նոցա բոլորի ոյժը, խորտակել էր կայսրութեան վերջին պատուարները և սպառնում էր որոտագին՝ մինչև Եւրոպայի խորքը մղուել։ 1453 թ. մայիսին Սուլթան Մահմէդ Բ. Ֆաթիհը առաւ, ինչպէս յայտնի է, Կ. Պոլիսը՝ առաջին քրիստոնեայ կայսեր հիմնած մայրաքաղաքը, որ 11 դարից աւելի կատարել էր քրիստոնէութեան Նոր Հոռմի՝ աշխարհի կենտրոնի դերը։ 1461 թուի աշնանը նա վերցրեց նաև Տրապիզոնը, որ Ժ.Գ. դարի սկզբից, երբ Կ. Պոլիսը ժամանակաւորապէս խաչակիր ասպետների ձեռքն ընկաւ և լատինական կայսրութեան մայրաքաղաք դարձաւ՝ Պալէօլոգների կայսերական տան մի ճիւղի, խղճուկ սահմաններում անկախութիւն պահպանած՝ անուանական կայսրութեան մայրաքաղաքն էր։ Վայրագ Մահմէդ Բ.-ը, որ հսկառակ իւր ազգի մէջ թողած փառաւոր համբաւի, ամենադաժան և անագորոյն բռնակալներից մէկն է եղել, նուաճած երկու մայրաքաղաքներն ևս

սոսկալի անգթութիւնների ենթարկեց, քրիստոնեայ բնակիչներին հրէշաւոր չափերով դուրս գաղթեցրեց, ըստ աչքի ընկնող քրիստոնէական տաճարները՝ Յուստինիանոս Մեծի հրաշակերտ ս. Սոփիայից սկսած, մահմեդական մզկիթների վերածեց, և բոլոր հնաքաւոր միջոցները գործ դրեց, որպէսզի ամենակարճ միջոցում նոքա իրենց քրիստոնէական պատկերը փոխելով՝ մահմեդական կերպարանք ընդունէին:

Ահա այս խոշոր անցքերի ականջալուր մէկն է գրե առել մեր յիշատակարանը՝ 1464 թ. ին, ուրեմն 11 տարի Կ. Պոլսի և 2 տարի միայն Տրապիզոնի առումից յետոյ: Շատ բան չէ պատմում նա այդ համաշխարհային նշանակութիւն ունեցող դէպքերից, այլ տալիս է միայն նոցա գտած տխուր արձագանգը Օսմանեան նորակազմ պետութեան արեւելեան մի անկիւնում: Հայոց մի վանքում, բայց ինչպիսի յիշատակներ է զարթեցնում նորա մի քանի տող պարզ նկարագրութիւնը: Յատկապէս մեր օրերում, երբ Օսմանեան արիւնոտ կիսալուսինը մռայլ ամպերի տակ է թաղնուել, և նախկին կաշակրաց ներկայ սերունդների տարօրինակ քաղաքականութիւնն է միայն արգելքը, որ դարեւոր սարկութիւնից գլուխ բարձրացրած քրիստոնեայ ազգութիւնների «Յաղթող» Մահմեդի ողորմելի շռաւիղներին դուրս չքչեցին բոլորովին քրիստոնէութեան ընաշխարհից, և ս. Սոփիայի գմբէթի վրայի խաչը վերականգնելով՝ Կ. Պոլիսն ու Տրապիզոնը կրկին քրիստոնէական չղարձրին, — խրատական է՝ վերափոխուել հոգւով այն «դառն և դժար ժամանակը», «դոր առաւելն ազգն Տաճկաց զաւրացեալ կային ի վերայ քրիստոնէից և պահէին ի հալածանս», աշխատել ըմբռնել այն, ինչ որ այդ ժամանակում ապրող քրիստոնեան պիտի գգար:

Բաւական է մի ակնարկ ձգել այն կարգադրութիւնների վրայ, որ օսմանցի տերեր իրենց նոր նուաճած երկրներում անում էին, որպէս զի մենք փշաքաղուենք, հազարերորդ մասը երեսկայելով այն զարհուրանքի, որի մէջ անց էին կացնում գրեթէ իրենց ամբողջ կեանքը նոցա ողորմելի հպատակները: «Ջխարածն դ. Ֆլորի արարին և կապուտ արկին ի գլուխ քրիստոնէից և զմեռեալն ի քաշ տան աանել», — որքան անէ՞ծք ու դառնութիւն այս Յամաոսո նախադասութեանց իւրաքանչիւրի մէջ: Խաւանք այն գլխահարկն է, որով մահմեդականութեան հիմնական սկզբունքներից մէկի համաձայն ռայան, կամ՝ ոչ մահմեդական հպատակը, տարէցտարի գնում էր՝ կարելի է ասել, մահմեդական երկրում չնչա՞ծ օղը. նա իսկապէս իրաւունք չունէր ապրելու ճշմարիտ հաւատացեալի կողքին, և եթէ վերջինս շնորհ էր անում, թոյլ էր տալիս, որ նա ապրի, այդ գոյութեան իրաւունքի համար ահա նա պէտք է գլխահարկ վճարէր: Էականք այստեղ, անշուշտ, հարկի ծանրութիւնը չէ, որ սկզբում մի

արծաթ դուկատ (կամ՝ ըստ յիշատակարանի, ֆլորին) էր իւրաքանչիւր զլխի (պսակուած անձի), կէս արծաթ ամուրիների (7—10 տարեկանից բարձր) համար, բայց որ, ինչպէս տեսնում ենք, շատ վաղ արդէն՝ դոնէ հեռաւոր գաւառներում, 4 արծաթի է բարձրացել, այլ այն իրաւագուրկ գրութիւնը, որի մէջ ձգուած էին մահմեդական լուծի տակ և զոդ ըստ քրիստոնեաներն անխտիր\*։ Այդպիսի իրաւագրկութեան հետեանօք ոչ միայն գլխահարկի չափը կամայականօրէն փոփոխուել կարող էր, ոչ միայն բնական բերքերի տաքանորդը, որ նոյնպէս պարտաւոր էր վճարել իւրաքանչիւր քրիստոնեայ հպատակ, դառնում էր յաճախ բերքի հինգերորդական, երրորդական մասը, ոչ միայն օրինական համարուող տուրքեր վերցնելուց զատ՝ ստորագրեալ իշխանութիւնները հարստահարում էին այլ և այլ կողմնակի տուրքերով և ձրի աշխատանքներ կատարել տալիս, այլ որ աւելի սարսափելին է՝ 5 տարին մի անգամ մանկաժողով էր տեղի ունենում. վաշտ վաշտ զինուորներ սփռւում էին գաւառները, իւրաքանչիւր քրիստոնեայ համայնք երեսաներով մի տեղ էին ժողովում, բնտրում էին 5 տարեկանից ի վեր տղաների մէջ այնպիսիներին, որ աւելի առողջ, բարեկազմ և մտացի էին երևում, և զոցա իրենց մայրերի գրկից խլելով՝ իբրև սուլթանի ստրուկների Կ. Պոլիս էին փոխադրում։ Ընտանիքից, մայրենի հողից և աղգութիւնից կտրուած, մահմեդականութեան ամենամոլեւածանդ սկզբունքներով դաստիարակուած այդ պատանիները կազմում էին յետոյ ենիչերիների այն ահաւոր գումարտակները, որոնցով մշտական պատերազմների մէջ գտնուող Օսմանեան բանակը իւր նօսրացած շարքերը խտացնում էր, բազմատարր և տիրող աղգութեան համեմատութեամբ շատ աւելի օտուարաթիւ հպատակների վրայ Սուլթանի լոնակալական իշխանութիւնը հաստատ պահում։ Չենք յիշում դեռ երկու սեռի այն անթիւ թշուառներին, որոնք մեծ և փոքր իշխանաւորների կրքերին զոհ էին դառնում, կամ մի տեղից իբրև գերի տարուելով՝ ուրիշ տեղ վաճառուում։

Այս իսկ իրաւագուրկ գրութիւնը չեղտելու, որոշ արտաքին նշանով ռայային իրողից, անհաւաստի հաւատացեալից տարբերելու համար էր, որ քրիստոնեաները պարտաւորուած էին կապոյտ գլխահանոցներ կրել։ Մեզանում մի քանի տասնեակ տարիներ առաջ շատ կային, այժմ ևս պակաս չեն՝ այնպիսի քաղաքագէտներ, որ պատճառական և անպաշտօն գրութիւններում հռչակել են օսմանցիների կրօնական ներողամտութիւնը, յատկապէս Հայոց եկեղեցու վրայ անցեալներում ունեցած երախտիքը՝ սորան իւր ներքին գործերը վարելու և դպրոցներ պահելու համար տրուած ազատութիւնը, և

\* *Shu. Geschichte der Byzantiner und des Osmanischen Reiches.*  
— G. Hertzberg. Berlin. 1883, S. 647 ff.

հետեցրել ապա, որ այժմ էլ որոշ տեսակէտներից ամենապահով տեղը հայութեան համար Տաճկաստանն է։ Ոսկայն այդպէս խորհողները պարզ հաշիւ չեն տուել իրենց, թէ ինչ է մանմեղական յուժը իւր բոլոր արհաւիրներով։ Պէտք է այդ լուծի տակ ճնշուած քրիստոնէի կաշուի մէջ մտնել, պէտք է ապրել մանմեղական երկրում մեր ժամանակի մարդու բարոյական աշխարհայնացողութեամբ, աչքով տեսնել քաղաքակրթութեան աւերումները հետ զուգընթացաբար այդտեղ յառաջացած բարոյական աւերումները, լինել մի օր գոնէ բացարձակ կամայականութեան ենթակայ այն վիճակի մէջ, որի մէջ մեր հայրերը դարեր են ապրել, մյն ժամանակը հասկանալի կլինի, թէ ինչ արժէք ունի այդպիսի վիճակ պահպանելու կամ երկարացնելու ամեն մի դատաւճիռ։ Յիրաւի օսմանցի դօրեղ իշխողները կրօնական այնքան ներողամտութիւն են ցոյց տուել, որ թէպէտ քրիստոնեաների բոլոր փառաւոր տաճարները, ինչպէս տեսանք, խլել մզկիթ էին դարձրել, նորերը կառուցանել բացարձակապէս արդելում էին և հնրի նորոգութիւնը մեծ դժուարութեամբ թոյլատրում, ընդհանրապէս ոչ միայն բռնի կրօնափոխութիւն չէին քաջալերում, այլ և դժկամակութեամբ էին նայում յօժար կամօք կրօնափոխ եղողների վրայ, որովհետև նոցանով պակասում էր հարկ վճարողները՝ պետական ծախքերի ամբողջ ծանրութիւնն իրենց վրայ կրողների թիւը։ Սակայն ինչ օգուտ քրիստոնեաների վայելած այդ առերևոյթ կրօնական ազատութիւնից, երբ իրենց շուրջն այնպիսի մթնոլորտ էր ստեղծուել, որի մէջ ոչ ճշմարիտ կրօնական, ոչ քրիստոնէաւայել բարոյական կեանք զարգանալ կարող էր։ Կըշռեցէք յիշատակարանի միայն այս մէկ դարձուածի ամբողջ ծանրութիւնը—«ե զմեռեալն ի քաշ տան տանել», զգացէք այն հոգու սարսափը, որի աչքի առջև իւր ծնողի, զաւակի, ամուսնու՝ ամենասիրելի կամ ամենապատկառելի անձի միւռնոցած դին քաշ են տալիս այդպէս իրրև մի անասունի լէշ։ Թափանցեցէք այն քրիստոնեայ ջերմեռանդ ժողովրդեան հոգեկան դրութեան մէջ, որ տեսնում է այդ ձևով անարգուած իւր քահանային, եպիսկոպոսին, ազգային պատուոյ ներկայացուցչին։ Ո՛րպիսի ոտնահարում անձի արժանապատուութեան, որպիսի այլանդակում մարդկային զգացումների՝ բռնաւորների և բռնութեան ենթակաների նկատմամբ միանգամայն։

Քանի այսպիսի ուրիշ յիշատակարաններ կան դեռ՝ դառն և դժար և ցեղ ժամանակներում գրած, որքան կսկիծ են բովանդակում և խնչպիսի սարսափներ նկարագրում։ Իրրև նմուշ բերենք միայն մի յիշատակարանի հատուած՝ այն գրչագիր աւետարանից, որ գտնուում է Շիրակի Մեծ-Արիսլալի գիւղում՝ գրեալ էի թուականութեանս Հայոց ՌԽԸ (Փրկչ. 1599), ի դառն և ի նեղ

ժամանակիս, որ ելեալ այր մի ի Թալրէզու... բազում ոճիրս գործեաց. որ Արճէշու և Արծրկու պարոն ևսպան և զքրիստոնէից զարին խնդրեաց, և էառ ժ. բնոն ի յԱրճէշու և ի. բնոն յԱրծկու...» Տեսէք, յիշատակարան գրողի համար ամենին տարօրինակ ու արտասովոր չէ քրիստոնէից արեան այդ զարհուրելի առուծախը երկու մահմեդական պետութիւնների և նոցա ստորագրեալ, կամ նոցանից ապստամբ, բազմաթիւ մանր ու խոշոր մահմեդական բռնաւորների մէջ. 30 բնոն արին. ինչ զարմանք, երբ 30 անգամ 30-ից աւելի տարիներ էին անցել արդէն, ինչ այդ ճիւղաղ արարածները հրապարակ եկան իրենց ճիւղային հայեացքներով՝ կեանքի նպատակի, մարդոց և ազգերի փոխադարձ յարաբերութեան մասին՝ «չար քան զազան և ծարաւիք քրիստոնէից արեան»—և որչափ քրիստոնէի արին էր Թալուել այդքան ժամանակամիջոցում,— որչափ Թոյն ներարկուել իբրեւ ստուեր չրջող կենդանի մնացածների արեան մէջ:

Այսօր, երբ մի եւրոպացի Պոլիս է գալիս և բոլոր պատուաւոր տեղերում՝ հիւրանոցներում, զբօսարաններում, դիւանատներում, հանդիպում է մաքուր և կոկ հագնուած, ֆրանսերէն խօսող, քաղաքավարի և սիրալիր Թուրքերի, իսկ վաճառանոցներում գործ է ունենում խորամանկ և հաճոյակատար հայերի հետ, տանում տարածում է քաղաքակիրթ աշխարհում այն անիրաւ կարծիքը, թէ այստեղ մի ազնիւ ցեղ է իշխում իր արհամարհանքին արժանի ստոր ցեղերի վերայ: Ազատ քաղաքացու հպարտ ինքնամոռացութեան մէջ գերմանացին ու անգլիացին ըմբռնել չի կարող, թէ Թուրքի ամենարարկիրթ երևոյթի տակն իսկ ինչպիսի գաժան հոգի. ինչ բիրտ զգացումներ են Թազնուած սովորաբար, և թէ ընդհակառակն անագորոյն ճակատագրի ինչ դժոխային մեքենայ է բանել Հայաստանի սէզ լեռների զաւակաց ջիղերի վերայ, որ այդպէս խեղել, այլաձևել է. երբեմնի ասպետական Մուշկէնների, Վահանների, Թաթուլների և Յովնանների սերունդներն այդչափ անճանաչելի դարձրել—19 տարի առաջ արտասահմանից վերադառնալիս ես ևս Պոլսից անցել եմ և երկաթուղով մինչև Իզմիր—Նիկոմիդիա ճանապարհորդել. շոգեկառքի մէջ հանդիպեցի և ծանօթացայ հայ ընտանիքների, որոնք ուխտ էին գնում Արմաշ. փոքրիկ չրջան կազմած խօսում էինք ինչ որ ազգային խնդիրների մասին, երբ յանկարծ շոգեկառքի դուռը բացուեց և մի պաշտօնեայ եկաւ անցաւ. ևս ապշած մնացի, թէ մի վայրկեանում ինչպէս կատարեալ կերպարանափոխութիւն տեղի ունեցաւ իմ խօսակիցների մէջ. բերանների խօսքը, նստուածքը, շարժուածքը՝ դէմքերն անգամ զարմանալի կերպով փոխուեց, և այդ բոլորն իբրեւ մի դիմակ վար առնուեց երկու բոպէ յետոյ, երբ պաշտօնեան անցել ելել էր, և ուղեկից-

Ներս Նախկին դիրքն ընդունելով՝ շարունակում էին Նախկին խօսակցութիւնը։ Ինչքան որ երեւին չեն անցել այս մարդոց և իրենց Նախնեաց գլխով, մինչև որ սերունդէ սերունդ ժառանգաբար այսպիսի ունակութիւններ են զարգացել նոցա մէջ։ Մեր ժողովրդի մօտ շատ կան այնպիսի անհամակրելի գծեր և տգեղ սովորութիւններ, որոնց համար հաստատ կարելի է ասել, թէ մահմեդական լուծի հետեանք են, նորա այս կամ այն մասի մէջ աւելի և պակաս չափով զարգացած՝ ուղիղ համեմատութեամբ այն երկարատեսութեան կամ խստութեան, որով ծանրացել է այդ լուծը նոցա վերայ։ Որքան տարբերում է Ղարաբաղից կամ Լոռիի հայը իւր բնաւորութեամբ և նիստ ու կացով մի Բուլանըխցուց, Արարկերդուց կամ Խոյնցուց, որքան խորթ է այժմ շատ բան Պարսկաստանից և Տաճկաստանից հարիւր տարի առաջ գաղթած հայերի համար, որ դեռ շատ սովորական է նոցա բնիկ հայրենիքում։ Եւ ընդհանրապէս ողոսահայերիս համար խորթ են տաճկահայի և պարսկահայի բնաւորութեան այլ և այլ գծերը, ընտանեկան և հասարակական յարաբերութեանց մէջ ցոյց տուած վարմունքը, պատուի, պարտաճանաչութեան, քաղաքացիական առաքինութեան մասին ունեցած հայեացքները, նոքա ուրիշ մարդիկ են երևում մեր աչքում։ Նոցա մասին ոչ պակաս Նախատական խօսքեր կարելի է լսել ողոսահայի, քան օտարազգու բերանից։ մեզ թուում է, որ նոքա իրենց ծուլութիւնից են աղքատ մնում ամենառատաբեր հողերի վերայ, որ իրենց թուլամորթութիւնից գերի են նոքա քրդի և բաշիբոզուկ աղաների ձեռքին։ Սակայն ով որ սեփական աչքով տեսել է և զգայուն մատներով չօշափել այն, ինչ որ նոքա այսօր էլ շատ տեղ քաշում են մահմեդական բռնութեան երեսից, տեսել և հասկացել է, թէ ինչպիսի աղէտաբեր հետեանքներ է ունեցել այդ բռնութիւնը նոյն իսկ իւր անմիջական գործիք եզրղ մահմեդականների համար, ինչպէս վարակել սոցա բարոյական հոգեւոր մթնոլորտը, բոլոր սրտով ողջունել կարող է միայն ամէն մի քայլ, որ ազատութիւն է բերում նորա ներքոյ ճնշուածներին, օրհնել Բալկանեան վերջին պատերազմի փառաւոր արդիւնքը և համոզմունքով պնդել, որ մահմեդական լուծից ազատուելը, թէկուզ ամենաթանկ գնով՝ բարիք և օրհնութիւն է ոչ միայն քրիստոնէի, այլ նոյն իսկ մահմեդականի համար։ Եւ փոխանակ արհամարհանքով վերաբերուելու՝ կորցրած առաքինութեանց համար, խորը պատկառանք կզգայ հայ ժողովրդի հոգեկան անսպառ կարողութեան հանդէպ, որ անտանելի պայմաններում այնչափ թաքուն գանձ դեռ պահել է և սխալի արդիւնքով փայլեցրել ամեն տեղ, ուր ամենափոքր չափով ասպարէզ է գտել։

Այդ տեսակէտից եւ մեր յիշատակարանը խիստ խրատական գծեր է հանդէս բերում։ Գրի է առնուած այն Տաճկաստանի այժմ-

մեան կարնոյ նահանգի Երզնկայի վիճակի Սեպուհ լերան Աւագ վանքում\*։ Վանք—Խնչպիսի կձու հեգնութիւնների հետ է կապուած, խնչ ցաւագար հնչիւններով բաղադրուած այս բառը ժամանակակից հայ մարդու՝ լրագիր կարգացող, հասարակական կեանքով փոքր ի շատէ հետաքրքրուող, «Հին աստուածների» ներկայացումների, քննադատութիւնների և դատերի դեռ թարմ տպաւորութեան ներքոյ գտնուող հայ մարդու ականջում—Երկար ժամանակ գրուում, խօսուում էր, թէ Հայոց վանքերը դատարկապորտների ապաստարաններ են, վանականները տղէտ, ծոյլ, ձրիակեր։ Մի քանի տարօրինակ խելքի տէր երիտասարդներ ելան, կամեցան ուսում, աշխատութիւն, գաղափար մտցնել վանք. բայց հայ հրապարակախօս-գրականութիւնը չհերեց նոցա այդ յանդուգն քայլը, որ կարող էր միամիտների կողմից իբրև հերքում նկատուել իւր անվերապահ դատաւճիռների, և ի միջի այլոց յանձին իւր մի տիպիքական ներկայացուցչի տարիներ առաջ սև վկայական տուաւ նրանց. հաստատեց, որ միայն այդ մսլորեալների դաւձը գէպի աշխարհ կարող էր փրկել նրանց կորստից. որ վանքն առմիշտ դատապարտուած է փակման և կործանման, և վանականը աշխատաւոր, ուսումնական և գաղափարական լինել չի կարող. որ տղէտ ու ծոյլ հոգևորականը գերադասելի է աշխատաւորից և ուսումնականից, որովհետև երկար վերարկու հագնել և ուխտել հետևելու Նորան, որ իբրև ինչս աշխարհ եկաւ, իբրև սրբութիւն ապրեց և իբրև անձնազօհ սէր խաչ բարձրացաւ՝ ըստ ինքեան նշանակում է այլանդակել մարդկային բնութիւնը և անընդունակ դարձնել՝ ծառայելու մարդկութեանը, որեւէ օգուտ բերելու։ Խնչպէս եղաւ սակայն, այս հրաշալի ճշմարտութիւնները քարոզողը ժամանակին չգնահատուեց ըստ արժանւոյն. գուցէ նոքա շատ էին տափակ, ծամժմուած և սովորական. գուցէ հասարակ լիզուով և պրոպայիլ ձևով արտայայտուած լինելն էր խանգարում, գուցէ կային դեռ միամիտներ, որ մտածում էին, թէ վանական կեանքը այժմ միայն կորցրել է իւր խորհուրդը, և միայն մեր ներկայ նիւթապաշտ դարում կոչու հողագնդի վրայ շրջող մահկանացուները չեն կարող համակերպել վանական գաղափարին, մինչդեռ եղել է ժամանակ, երբ գաղափարը իւր արժէքն է ունեցել և իրականացում գտել։ Իսկ շորհալի քարոզիչը շատ էր ուզում դափնիներ վաստակել, և ահա երկարատեւ տքնութիւնից և և յամառ մտորումներից յետոյ նա գտաւ եղանակը՝ տպաւորիչ դարձնելու իւր քարոզը։ Ծովային միբաժների պէս խոստմնաւոր և զարնան սիւքից աւելի թեթեւթօիչ պատկերացումներով սաւառնում է ահա նա իւր երևակայութեան ստեղծած անցեալում, գող-

\* Տես. Տեղեկագիր Հայոց Մեծաց.—Հ. Ղ. վ. Ալիշանեան. Վեներտիկ, 1885. եր. 42։

տրիկ բանաստեղծական ոճով նկարագրում շամանդաղից կառուցած մի վանք, և ապացուցանում, որ այդտեղ էլ հազար տարի առաջ նոյնն է կատարուել, ինչ որ այսօրուայ վանքերում. աշխարհը գնացել է վանականների ետեից և քաշել տարել կրկին իւր գիրկը. նայում են մարդիկ հրճուանօք այդ եթերային կառույցուածքին, հաճութեամբ լսում թովիչ խօսքերը և տուն դառնում մխիթարուած, որ ոչինչ չկայ գաղափարական և երբէք էլ չի եղել. որ յիմար էին և մոլորեալ նոքա բոլորեքեան, որոնք ձգտել են ելնել իրենց չրջապատող կեանքի ճահճից և գոյութեան մի բարձր խորհուրդ որոնել, և նոքան են լաւը, որ թաղուած մնում են փափուկ, զէճ, ապահով և խոր ճահճի մէջ, փտանգաւոր թռիչքներ չեն անում ու չեն փորձում երբէք ճանապարհորդել դէպի ինչ որ գաղափարական վայրեր, որտեղից չուտ թէ յետոյ նոյն աշխարհը պիտի վերադառնային:

Ի՞նչ է ասում սակայն դորա հանդէպ այն «ստրուկ, տրուպ, հէք» կրօնաւորը՝ ասորի կաւրէլի որդին, որ իւր իղճուկ ոտանաւորով յիշատակ է թողել մեզ իրեն պատսպարող հայ վանքի և վանականների նկատմամբ իւր տածած երախտագիտական զգացումների արտայայտութիւնը: Նմանութիւն կայ նորա նկարագրած միշավայրի և Հին ուստուածների քունը խանդարող կարբիկատուր շինուածքի մէջ: Այդ անպաճոյճ նկարագրութիւնը մի ծանր կշտամբանք չէ ժամանակակիցներիս հասցէին թէ՛ զբաղեցրէք որքան կուզէք ձեր մաշուած ուղեղն ու պարապ սիրտը ձեր անմիջական չրջապատի դատարկութիւններով, և ձեր իմաստակութիւններով մի անարգէք գոնէ ձեր երանելի նախնեաց յիշատակը, որոնց կրակի և արեան մէջ կռուած հողին հասկանալ և քրտնաջան վաստակով ձեզ թողած ժառանգութիւնը գնահատել դուք չէք կարող: Երեսունի չափ զանազան կարգի և աստիճանի այն կրօնաւորները, որոնց անունները միառմի յիշում, կամ մոռանում, է «եզկելի Ստեփանոսը», նորա համար չէին Աւագ վանքում հաւաքուել, որ իրենց ունայն մտածմունքներով օղային ամբողջներ կառուցանեն, կամ իրենց դատարկապորտ անձը ձրի հացով պարարեն, նոցանից մանկագոյնները եկել էին լոյս և գիտութիւն որոնելու հասակաւորների մօտ, ինչպէս սոքա իրենց կարգին նախորդների մօտ էին որոնել, ինչպէս այսօրուայ երիտասարդութիւնը որոնում է քաղաքակիրթ աշխարհի լուսաւորագոյն կենտրոններում, լոյս և առաքինական ու արդասաւոր մի կեանք՝ այնպիսի տեղ և այնպիսի մի ժամանակ, ուր շուրջը խաւար էր համատարած, աւեր և մահ բռնութեան: Հազիւ կէս դար էր անցել այն անյիշելի օրերից, երբ այս կողմերը հեզեզեց միջնադարեան սարսափների մէջ իսկ մեծագոյն սարսափը, որի անունն է Լէնկ-թէմուր, այնուհետեւ էլի ինչքան պատերազմներ և աւերմունք

տեղի էին ունեցել. դեռ տասը տարի առաջ, առած է, նոյն այս Գարանադեհի գաւառը, որի մէջ գտնուում է Աւագ վանքը, ընդարձակ աւարառութեան և գերութեան ասպարէզ էր եղել. դեռ հինգ տարի առաջ երկրաշարժը կիսակործան էր դարձրել շրջակայքի գլխաւոր կենտրոնը՝ Երզնկան\*։ Ինչպիսի տոկունութեան տէր են եղել ուրեմն յիշեալ վանականները, որ չնայած այդ բոլոր արհաւիրքներին ու ծանր հարուածներին, վանքը դարձրել են մի աննուազելի փեթակ, ցրուած աշխատաւորներին կրկին ու կրկին անգամ ժողովել, մեղուի յամառութեամբ և ժրջանութեամբ փութորկի թողած զբաղան ծաղիկներից մեղր ամբարել ապագայ սերունդների համար։ Եւ տեսէք որքան հեռաւոր տեղերից են եկել այդ աշխատաւորները. Բաղէշից, Հաղբատից, Պոնտոսից, ծովի միւս կողմում եղող Կաֆայից անգամ։ Նոցա ըստինքն ձգել բերել է գիւտութեան ծարաւը՝ վտանգ և արգելք և նեղութիւններ յաղթահարելով, մի բարեհոգի ուսումնական վարդապետի ոտքը հասցրել։

Արդէն երկու դար առաջ՝ ԺԳ. դարի միջոցներում Երզնկան իւր շրջակայքով և Սեպուհ լեռան վանքերով հոչակ էր ստացել իրրեւ հայութեան ուսումնական կենտրոններից մէկը։ Այդ շրջանում ծաղկող և Երզնկայի վարդապետարանի գլխաւոր փառքը կազմող իւր ժամանակի ամենից տաղանդաւոր մատենագիր, Յովհաննէս Երզնկացուն և Երզնկայի անցեալին իւր Յուշիկների մէջ\*\* Հ. Ալիշան մի ուշագրաւ բանասիրութիւն է նուիրել, որ դեռ չի կորցրել իւր թարմութիւնը։ Նոյն շրջանից և յաջորդ դարերից հետաքրքրական յիշատակարաններ ու տեղեկութիւններ ունի ժողոված Գարեգին վարդապետը, որ պիտի հրատարակէ հետզհետէ։ Ճանկալի են սակայն ամբողջական և ընդարձակ ուսումնասիրութիւններ, որոնք թէ այս դարոցի և թէ ուրիշ աւելի հների ու նշանաւորների ծաղկումն ու զարգացումը պարզելով՝ յոյց տալին, թէ ինչպիսի մեծ դեր են կատարել նոքա մեր ազգային-եկեղեցական պատմութեան ու գրականութեան վերաբերմամբ։ Այստեղ կբաւականանաք ուշադրութիւն հրաւիրելով մեր յիշատակարանի ժամանակակից վարդապետարանը բնորոշող մի քանի գծերի վրայ, որի համար կօգտուենք նաև նորա հետ պատմական առնչութիւն ունեցող մի քանի ուրիշ յիշատակարաններից։

\* Տես՝ «Յուշիկը հայրենեաց Հայոց».— Հ. Ղ. Ալիշան. Վենետիկ. 1870. հատոր Բ. եր. 467. ուր յիշուած է, թէ ինչպէս 1474 թուին մի Վենետիկեցի ճանապարհորդ Երզնկայից անցնելով՝ այդ քաղաքը դեռ կիսակործան վիճակի մէջ է տեսել, անշուշտ մեր յիշատակարանում յիշած երկրաշարժի հետեւանոր։

\*\* Հատոր Բ. եր. 437 շ.

Յովհաննէս Մուշի որդու համար չեղտել էինք արդէն\*, թէ ինչպիսի մեծ յարգանքով է յիշում իւր ուսուցչի անունը: Մեր յիշատակարանում այդ յարգանքը այն աստիճանի է հասնում, որ գրիչը չի վստահանում նոյն իսկ մեծ վարդապետի անունը տալ, այլ բաւական է համարում ակնարկել, որ նա անուանակից էր «Ամլորդու», այսինքն Յովհաննէս Մկրտչի՝ նորա նման «սուրբ և մաքուր ւ՛առաքինի, ևնա՝ Թէ որքան բարձր է գնահատում նա վարդապետի աշխատութիւնը և իրեն ու ընկերներին մատակարարած ուսումը՝ վկայել է նաև մի ուրիշ յիշատակարանով (նոյն ձեռագրի ք. 228 v.), ուր խնդրում է յիշել «գերերանհալ աստուածաբան արփիաւորիչս մեր՝ Ամլորդոյն անուամբն յորջորջեալ, որ բորբոքեալ կա սիրովն աստուածային, ի տուէ և ի գիշերի անհանգիստ երկամբք, մտանէ ի բուրաստանս աստուածային և ժողովէ զուտինս քաղցրութեան և տա ի յարբումն մերոց պասքեալ ոգոցս. զոր տրիտուրն ոչ առնու ի մէնջ, այլ յԱստուծոյ»:

Պատկառանքի և երախտագիտութեան նման զգացումներ շատ յաճախ արտայայտուած ենք գտնում մեր ձեռագիրների յիշատակարաններում և տեսնում, որ նշանաւոր վարդապետարանների ղեկավար վարդապետները շատ բարձր գնահատուած բարոյական մեծութիւններ էին ժամանակակիցների աչքում, և նոյնչափ բարձր գին ունէր նոցա աւանգած ուսումը: Այսպէս՝ Համեթնացի Յովհաննէս Բազ Բաբունու մասին, որ մեր յիշատակարանում երկրորդ տեղն է յիշած, բայց, ինչպէս ուրիշ յիշատակարաններից երևում է՝ յետոյ երկար ժամանակ անկախ դպրոցի ղեկավար է եղել, իւր աշակերտ Մաղաքիան Հ. 656 ձեռագրի յիշատակարանում, 1494 թուին, գրում է. «Առ ոտս սուրբ վարդապետի՝ մեծ բարունոյն Յովանիսի. ի ժամանակիս, որ անբարի, սա լոյս ծագի մէջ աշխարհի, լուսաւորող սա համայնի՝ Հայոցս տառապեալ ազգի, ուսուցանող սա միշտ լինի՝ ի տուէ և ի գիշերի, զխրթնածածուկ բանս մատենի յայտնէ մանկանցս Սիրովնի. զբանս առնու սա ի մտի՝ իբր կերակուր ի բերանի, ծասկէ ծամէ ի խորհրդի, կակզցէ զիմաստ բանի, լնու ի միտս լսողաց՝ աշակերտացն, որպէս տղի. այս կերակրոյս ով փափագի և ճաշակող սորա լինի, յանմահ հացէն նա ոչ սովի՝ յաւուր մեծի դատաստանի...» Մեծ վարդապետի հմտութիւնից և վայելած հռչակից մեծապէս կախումն ունէր հարկաւ այն դպրոցի հռչակն ու դիրքը, որ նա ղեկավարում էր: Այս և ուրիշ մի քանի յիշատակարաններից տեսնում ենք, որ Համլինացին ուսուցանում էր արդէն ոչ թէ Աւագ վանքում, այլ նոյն Սեպուհ լեռան մի զառիվայրի վե-

\* Արաբատ. յունուար, եր. 43:

բայ գտնուող Կայիփոսի վանքում\*, որի ս. Յակոբ Մծբնայ հայ-  
րապետի անուան նուիրուած տաճարի հետ յիշատակարաններում  
յիշուում է նաև ս. Սիոն և որ կոչուում է ուրիշ տեղ Կապոս կամ  
Կաբոս: Մինչդեռ մեր յիշատակարանում Աւագ վանքն աւելի հա-  
մետօրէն «լսարան» է անուանած՝ Կայիփոսի վանքը մի քանի յի-  
շատակարաններում հանգէս է գալիս ուղղակի իբրև «համալսարան»,  
և պարոնորդի Յովհաննէս վարդապետի համար Գ. 6 ձեռագրի  
1496 թուին գրուած յիշատակարանում ասած է. «Ի համալսարանս  
երիցս երջանկի և տիեզերալոյս Յովհաննէս քաջ հոգևորի, որ է աշ-  
խարհաւ Համլէնցի, ի ցեղէ քաղաւորակաւ...» Թէ ինչ հիման վրայ  
նա թաղաւորական ցեղից էր համարուում, չենք կարող ասել. բայց  
քանի որ նորա հայրենի գաւառը Համլէն, Ճորոխի հովտում՝ սահ-  
մանակից էր Բագրատունեաց Սպեր բնագաւառին և դեռ մինչև  
վերջին ժամանակներս մնացած աւանդութեամբ\*\* այդտեղ ապաս-  
տան են գտել Ա.Գիի աւերումից յետոյ բազմաթիւ փախստականներ,  
թաղաւորական ցեղից իշխաններ էլ եղել են սոցա մէջ, երեի այս  
Յովհաննէս վարդապետն ևս Բագրատունեաց տան հետ էր կապու-  
մբ նախնեաց յիշատակը: Յամենայն դէպս այն բարձր դիրքն ու  
մեծ յարգանքը, որ շրջապատողները նրան ընծայում են՝ նորա վար-  
դապետական հմտութեան շնորհիւ էր, և ոչ նորա իշխանական ծագ-  
ման: Նոյն Կայիփոսի վանքում 1497 թուին գրուած մի ուրիշ ձե-  
ռագրի յիշատակագիր՝ խնդրելով յիշել «նաև զերիցս երանելին  
դՅովհաննէս բարուն արին, որ այսմ ամի հանգեաւ ի Քրիստոս Յի-  
սուս», այսպէս է ողբում նորա մահը. «Աւաղ, աւաղ, ուրախու-  
թեամբ սկիզբն առի և տրտմութեամբ յաւարտ հասի. քանզի ոչ  
ժամանեաց բարուն արի, բացայայտող այսմ տառի, ակն պայծառ  
և հրաշաօր, աստուածաբան հիանալի, վեհ, իմաստուն և գովելի.  
այսաւր մահու նա պարուրի՝ ազրիւրն քաղցր, ախորժելի, զովա-  
ցընէր զպապեալ հոգի՝ ցամաքեցաւ նա յայսմ ամի, որ և ընաւ ոչ  
երեի. արեգականն նմանի՝ զլոյսն պայծառ յինքն ունի, էջ ի ներ-  
քին կիսազընդին, խաւարեցուց զմեզ եղկելի»:

Համլէնացու մահից յետոյ նորա դպրոցը երկարատեւ բարգա-  
ւաճում ունենալ չէր կարող այլ եւս: Յաջորդ Ժ.Զ. դարը շատ աւելի  
«անբարի ժամանակ» էր հայ ժողովրդի, ի մասնաւորի հայ եկեղե-  
ցական կեանքի ու գրականութեան համար, քան եղել էին նախորդ

\* Տեղեկագիր Հայոց Մեծաց, եր. 44:

\*\* Տես. Արարատ, 1895 եր. 296 եւ 259 շ., ուր շատ հետաքրք-  
րական տեղեկութիւններ կան այս գաւառի բռնի կերպով մահմեդական  
զարծրած հայերի, նոցա պահած հայերէն լեզուի եւ սովորութիւնների,  
անցեալ ու ներկայ վիճակի մասին:

դարերը՝ Այս դարի սկզբում Շահ Իսմայիլ Ալֆեանների հարստութիւնը հաստատելով Պարսկաստանում՝ շիա ազանդը իշխող դարձրեց ամբողջ մահմեդական արեւելքում, որով Օսմանեան սուլթանների համար յառաջացաւ կրօնապէս և քաղաքականապէս հաւասար թշնամի մի զօրութիւն, և սկսուեցան այդ զօրութիւնը խորտակելու նպատակով անվերջ պատերազմներ, որոնց գլխաւոր ասպարէզն առաջին չրջանում արեւմտեան Հայաստանն էր։ Ուստի դարմանալի չէ, որ յատկապէս այդ կողմերից այլ ևս նոր ձեռագիր մեր ձեռքը չի հասել։

Արգէն վերս յիշուած Գ. 6 ձեռագրի 1496 թուի յիշատակարանի ներքեւ ուրիշ գրով հետեւեալն է աւելացրած. «Նաե զանարժան ծառայս ծառայիցդ Աստուծոյ՝ զկարապետ սուտանուն արեւդայս զԲաղիշեցիս, յիշեցէք ի բարին Քրիստոս, որ զայս վեց տետրու կէսս գրեցի. զի զգիրքս նոր էր գրած, և յահէ սըմբակաց հեծելոց կայր ի պահեստի ի ծերոյս վիմաց, և յիջմանէ անծրակայ ապականեալ էր...» Քանի քանի այդպիսի ձեռագիրներ ձիանց սըմբակներէ տակ տրորուել անյետացել են, քանի ուրիշները քարերի ծերպերում պահած՝ անծրի տակ ընկել, և այնուամենայնիւ այնքան պաշար է մնացել մեզ՝ հենց միայն Սեպուհ լերան վանականների մեր ի նկատի առած քառասնամեայ գործունէութեան չրջանից, որ ամենանպաստաւոր գաղափար է տալիս նոցա տոկունութեան, ջանասիրութեան, հոգևոր կորովի և ուսումնասիրութեան մասին։ Յիշեք յատկապէս Սեպուհ լերան վանքերում պահուած մի դեղեցիկ աւանդ, որ փառաւոր վկայական է հայ վանականների գրասիրութեան՝ գիրքն ու ուսումը հանրամատչելի դարձնելու ձգտման։ Մ. Աթուրի մատենադարանի Հ. 153=177 Աստուածաշունչը, որ Գարեգին վ-ի դիտողութեանց համաձայն գրուած պիտի լինի Ժ.Գ դարի վերջում, նշանաւոր Մովսէս Երզնկացու ձեռքով երկու տեղ նման խօսքերով հետեւեալ ազդարար յիշատակարանն ունի. «Որ զաստուածաշունչս, կամ զայլ վարդապետական գրեանք, որ ի ս. Լուսաւորիչս կա, յաղագս յաչաղանաց խնայէ, որ իր չըրջակայ վանօրայքս դաստուէն լինի՝ եղիցի ընդ անիծիւք, իբրև զայն ծառայն, որ թաքոյց զարծաթ Տիառն իւրոյ»։

Ինչպէս մեր յիշատակարանի Հ. 66 ձեռագիրը պարունակում է Դիոնէսիոս Արիոպագացու գրուածները, որոնց հեղինակը տօնւում է մեր եկեղեցում իբրև ընդհանրական եկեղեցւոյ մեծ վարդապետներից մէկը, և սորա մասին եղած աւանդութիւնը գրուատանօք մէջ է բերել յիշատակարանը, այնպէս և միւս ձեռագիրները պարունակում են ուրիշ մեծ վարդապետների՝ Գրիգոր Աստուածաբանի, Կիւրեղ Աղեքսանդրացու, Գր. Նիւսացու գրուածներ, և ցոյց են տալիս, որ այս տեսակի զուտ աստուածաբանական գրական-

նութիւնն առանձնապէս սիրուած ու մշակուած էր Սեպուհ լերան վանքերում: Բոլոր այդ ձեռագիրները գրուած են շատ կոկ, համաշափ սիրուն բոլորգորով: Իրենց ութածալ զիրքովն ու կաշէ կազմովն էլ իրար նման են, և նոցա յիշատակարանների՝ իրենց ժամանակի համեմատ, հարթ ու կանոնաւոր լեզուն, հարուստ և պատկերաւոր ոճը, ոտանաւոր ձևի և բանաստեղծական արտայայտութիւնների գործածութիւնը՝ վկայում են, որ գրագիրտական ուսմանց վրայ էլ քիչ ուշագործիւն չէին դարձնում այստեղ: Չէ որ հանրագէտ Յովհաննէս Նրզնկացին միևնոյն ժամանակ միջնադարեան վերջին ամենանշանաւոր քերականն էր, և այս մասում էլ, անշուշտ, իւր հմտութիւնից ժառանգութիւն էր թողել յետորդներին\*:

Մեր յիշատակարանը՝ որչափ պարզ և զիւրըմբռնելի ոճ ունի, չնայած արտաքին պաճուճանքին, պատկերաւոր արտայայտութիւնների և նմանութիւնների յաճախութեան, նոյնչափ պարզ, բարեմիտ, նրբազգաց և հանրամատոյց մի ոգի է հանդէս բերում կրօնաւորի անապատական սքեմի ներքոյ: Նորա հեղինակը մի մի բարի և սիրալիք խօսք չի խնայում ոչ միայն իւր միաբանակիցներից իւրաքանչիւրի և իւր վանքի հետ առնչութիւն ունեցող հոգեւոր անձերի համար, որ միջոց է տալիս մեզ ծանօթանալու, թէ ինչ տարրերից էին կազմուած այս վանքերը և ինչպիսի յարաբերութեանց մէջ էին գտնուում, այլ նաև իւր արեան մերձաւորների և բոլոր նոցա համար, որոնց որ և է կերպով երախտապարտ էր: Մինչև իսկ երախտիք չունեցողներին և իրեն չօրհնողներին կամենում է նա օրհնողների շարքում օրհնած լինել: Եւ այս ազատախոհ ոգին, այս հեզ բարեացակամութիւնը շատ սովորական երևոյթ էր հայ վանական կեանքի մէջ: Մեր թշուառ երկրում, ուր վանականը նոյնքան ենթակայ էր բազդի ծանր հարուածներին, որքան ամէն մի պարզ շինական, ուր վանքի գուռն ամէն բոպէ բացուել կարող էր այլապէս ընդհատների առաջ, անարգանք ու խոչտանգանք բերել նորա խաղաղ ընակիչների գլուխը, արեղայական մեծամտութիւն, փառասիրական և իշխանասիրական ձգտումներ, կրօնական հեղինակութեան շահագործումն, մարդոց հոգիների վերայ իշխելու նպատակով՝ զարգանալ չէին կարող: Վայելք և ուրախութիւն չլար այդ աշխարհում, որ նոցա հրապոյրը իւր հետ տանէր վանք մտնողը և զրկուած զգար իրեն այնտեղ մնացողների համեմատութեամբ. այլ նա իւր հետ տանում էր անվերջ զրկանքի և տառապանքի անջրնջելի տպաւորութիւններ և աշխատում վանական առանձնութեան

\* Ս. Մինասի վանքը, ուր նա ուսում է ստացել եւ ուր գրել է իւր քերականութեան մեկնութիւնը (տես. Յուշիկը, Հ. Բ. եր. 484) շատ մօտ է Կալիփոսի վանքին:

մէջ պահպանել՝ հոգևոր նպատակի համար զարգացնելով աստուածային ստեղծագործութեան այն գեղեցկութիւնները, չնորհներն ու բարիքը, որ ազատել կարելի էր բռնաւորների ձիանց սմբակներից և աւերիչ ժամանակի ճիրաններից: Երբ շուրջն ամենուրեք ամէն ծաղիկ թառամել էր, ամէն տունկ չորացել, ամէն աղբիւր ցամաքել, ամէն լոյս չիջել, գառը գայլի բաժին եղել, ինչ դարմանք, որ հայ կրօնաւորը վանքի պարիսպների մէջ է որոնում այդ բոլորի գաղափարական պատկերը, և Երկնաւորի սպասաւորութեան նուիրեալ հոգիների մէջ վերաբաղեցրած գտնում: Եւ այն կրօնաւորը, որ էլ արեւ, լուսին, աստղ, ծաղիկ, վարդ, շուշան, ակունք, աղբիւր, պարտէզ ու պտուղ չի մնացել, որ մի քանի տողի մէջ տեղաւորել է՝ նոյնպէս հեռու էր, անշուշտ. բնութեան իսկական անմեղ գեղեցկութիւններն և բարիքը արհամարհելու մտքից, ինչպէս իւր փաստածային վարդապետը, որ Գալիլիայի հրաշագեղ ծովակի ափին էր քարոզում և այնքան սիրով օրինակ բերում՝ վայրի շուշանն ու հասած արտն ու մոլորեալ ոչխարն ու աշտանակի վրայ դրած ճրագը: Եթէ նարեկայ խորախորհուրդ ողբերգակը ամէն առաւօտ իւր հիացած աչքերի առաջ ծաւալող ծիծաղախիտ ծովի մէջ Բեթզեհէմի հրաշալի մանկան ծով աչքերն էր տեսնում՝ երկու փայլակնաձև արեգականց նման, և այդ լուսոյ ծովի խորքը սուղեւելով՝ ի խորոց սրտի իւր խօսքն ու հառաչանայ ձայնը ուղղում առ աղբիւրն լուսոյ և կենդանութեան, նորա հոգեկից ու ազգակից ամէն կրօնաւոր էլ մի անգամ այդ լուսոյ մէջ թաթախուելուց և յաւիտենական երանութեան ճանապարհը նորանով իւր առաջ բացուած տեսնելուց յետոյ՝ դժուար թէ ցանկութիւն ունենար այլ ևս աշխարհիկ կեանքի դառնութեամբ ի ծովի մահահրաւէր գիրկը վերադառնալու:

Մի կէտ ևս առանձին ուշադրութեան արժանի է և հետաքրքրական մեր և ուրիշ յիշատակարաններում՝ այն, որ նոցա դրողը ինչքան մեծ գովասանքով, դրուատներով և բարձր տիտղոսներով է խօսում իւր վարդապետների, բարերարների՝ առհասարակ օտարների մասին, այնքան աւելի իրեն խոնարհեցնել, ստորացնել է աշխատում: Բնորոշ է այս տեսակէտից Հ. 94 և Հ. 96 \* ձեռագիրների յիշատակարանների համեմատութիւնը. մինչ վերջինիս մէջ Համչի-նացու վերեւ յիշուած աշակերտ Մաղաքիա Բարեդագի գրիչն իրեն անուանում է (Թ. 149 v.) «յոգնամեղ և փծուն», (Թ. 448 v.) «մեղաւոր, դառածեալ և հողոյ հաւասարեալ՝ խրխալթեալ», առաջինում (Թ. 164 v.) մի ուրիշը նրա մասին ասում է. «Տէր Մաղաքէ, դու

\* Հ. տառով նշանակում ենք Մ. Աթուի մատենադարանի հիմնական մասի ձեռագիրների վրայ մինչև վերջերս եղած համարները. Գ. տառով այն ձեռագիրների համարները, որ Գէորգ Դ-ից ի վեր են աւելացել:

աննման, քաջ բարունի յաճախաբան, դժոխերուս զառաջս զամէնն  
եհան, զձայնն լսէ սիրական, աւրհնեալ եկեալ դու յաւիտեան»  
Նեղութեամբ ապրել, տանջանօք վաստակել, պատուական արդիւնք  
են թողել այս համեստ մարդիկ, և ուրիշ փափազ չեն ունեցել,  
բայց միայն՝ որ օրհնութեամբ յիշուի նոցա անունը: Ընդ միշտ օրհ-  
նուած լինի թող նոցա բարի յիշատակը, ամէն:

#### 4. եպիս.

Ձեռ. Հ. 66.

Վիոնիսիոսի Արիսպագացոյ՝ Աստուածաբանականք:

ք. 253. Յիշատակարան գրոցս:

Փառք Հաւրն Էականի, պատիւ Որդոյն իւր Միածնի,  
Եւ գոհութիւն Հոգոյն բարի՝ Երբորդութեանն անճառելի.  
Անձամբ երեք՝ ընտութեամբն մի, և միութիւն անքակտելի՝  
Միշտ աւրհնութեամբ գերապատուի յեղականացս անլուելի.  
Որ ետ անձինս իմ տկարի կարողութիւն իմ ըստ կարի,  
Եւ ի յաւարտ այսմ տառի ետ ժամանել Տէրն բարի:  
Զի սայ է գանձ անդրժելի Դիոնիսի սրբոյն մեծի,  
Որ զամենայն իմաստ բանի սա ամբարեալ ի յինքն ունի,  
Պատմէ ըղկարգ իմանալի գհրաբուն սեռից բանականի,  
Այլ և զկարգ մեր ուղակի եկեղեցոյ՝ նոր Սիոնի:  
Աստուածաբան է սա արի, պատմէ խորհուրդ յոյժ բաղձալի,  
Այլ և զանուանս Գերապետի խորհրդաւոր ներակերտի  
Տա նշանակ սա զգալի, զի մեր տկար միտքս հալի.  
Ազնիւ և լոյս ասէ բարի և թագաւոր ամենայնի,  
Դարձեալ ի բաց բառնայ յայտնի, զինաղգալեացս ոչ բաղդատի.  
Թեպէտ խնամտք միշտ հաղորդի, այլ էութեամբն անհալի:  
Այլ և Աստուած խոստովանի զՅիսուս Քրիստոս մարմնով յերկրի,  
253v. Աստուածածին | և սրբունի զկոյս Մարիամն ցանկալի:  
Սա ի յաւուր մեծ ուրբաթի կայր ի քաղաքն Բալբաքի,  
Տեսաւ զգործ զարմանալի, զոր ներգործէր Տէրն ի խաչի.  
Խաւար կալաւ ի վեց ժամի և շար(ժ)եցաւ հիմունք երկրի.  
Սա իմաստուն և նազելի, ծանեաւ թէ չէ գործ այս կարգի,  
Այլ Արարիչն անձանաւթի մարմնով կախեալ կա ի փայտի,  
Ի մարդկանէ, որ չեն բարի՝ նախատանաւք յոյժ զըսրովի:  
Զայս իմացաւ այրս բարի, կնքեաց գրով ի քարտիսի,  
Ի գալ յԱթէնսն Պաւղոսի սա հաւատաց Տեառն Յիսուսի.

Վասն այն եղև սայ նազելի և ամենայն շնորհաւք իլի,  
 Զի հաւատաց Տեառն Բանի և մաքրեցաւ իբրև զոսկի,  
 Բրդխեաց զբանսա բաղձալի՝ ի Սուրբ Հոգւոյն, տուողէն բարի,  
 Յոյժ գեղեցիկ և գովելի, քաղցր և անուշ և ցանկալի:  
 Եւ իմ տեսեալ զայս՝ տրփալի փափաք եղեալ ստորագրեցի,  
 Ի յիշատակ քաջ Տելետի և իմաստուն Ղաբանոսի,  
 Հաւրբս մերոյ սրբազանի, որում անուամբ ձայն յորջորջի  
 Անուանակցին համազուգի սուրբ և մաքուր՝ Լառաքինի,  
 Հոգւոյն Սրբոյ տուն և տեղի, իմաստութեան բուն բարելի,  
 Աստուածաբան ներհմտալի, ներդա՛ն դասուց հանգունակի,  
 Որ ի տուէ հանգիստ չունի՝ լի գիշերի աննիրհելի,  
 Մըտեալ ի յերկ և աշխատի յաստուածատունկ բուրաստանի,  
 Հաւաքելով զծաղիկ ծայրի յերփնագունից ներդունակի  
 Եւ կազմելով ուտին բարի առ ի յարբումն առողջալի:  
 Զոր Տէր Աստուածն ամենայնի պահէ անփորձ ամաւք իլի  
 Եւ յետ աստեացս այս զգալի տա զհանգիստն յաւիտենի:  
 254Դ. Այլ և եղբարցս ամենայնի, որ կան ի յայս խարանի,  
 Սա յիշատակ ի մէնջ լիցի ձեզ յիշողաց զմեզ ի բարի.  
 Թէ՛ դէպ լիցի կամ պատահի, որ հանդիպիք այսմ տառի՝  
 Յիշէք զեղբայրքս այս նազելի, զոր յիշեսցուք այժմ ի կարգի:  
 Նախ զգլուխն ամենայնի, զոր յիշեցաք նախկնակի,  
 Զքաջ բարունին մեր բաղձալի, որ Ամբողջուն անուամբ կոչի,  
 Եւ ընդ սմին հանգունակի զՏէր Յովանէս քաջ բարունի,  
 Որ գաւառաւ Համշինացի, պետ և զլուի Պարսնորդի,  
 Եւ զվարդապետն զովելի, զԱստուածատուրն Զերմացի,  
 Որ ջերմեռանդ սիրով վառի ի շինութիւն այս սուրբ ուխտի:  
 Զկալիակոպոսս մեր արհի՝ զՏէր Սարգիսն ցանկալի,  
 Վերագիտող Եզրնկայի և Եկեղեայն գաւառի,  
 Եւ ընդ նսին համակարգի զՏէր Գրիգորս բաղձալի՝  
 Ըզառաջնորդ սրբոյ ուխտի Հաւրբն մեծի Լուսաւորչի:  
 Այլ և զհայրբրս մեր բարի, զերկու վարպետս նազելի՝  
 ԶՏէր Արբահամ հեզ և բարի, զՏէր Մարգարէն առաքինի,  
 Եւ զփառակալս առաքինի՝ ըզՏէր Յակոբ քաջ և արի,  
 Որ ի տըւընջեան՝ լի ի գիշերի կա անհանգիստ անլուելի:  
 Եւ զերկու հայրս ծերունի, հանգոյն մեծին Եղիայի,  
 ԶՏէր Առաքել Եզրնկացի և զՏէր Ներսէս Բաղիշեցի:  
 Այլ և զմանկունքս առազաստի, սուրբ և մաքուրք և սխրալի,  
 Ոմանք ի սպաս սրբոյ բանի՝ լի այր ի վարունն երաժշտի.  
 Զոր յիշեսցուք ի սի կարգի ի յառաջնոց մինչ ի վերջի,  
 Եւ ձանձրութիւն ձեզ մի լիցի, այլ հայցեցէք մասն բարի:  
 254V Նախ ըզԳրիգոր Կաֆայեցի, զսպա(սա)ւոր Տեառն բանի,

Այլ և զծաղկող այս մատենի՝ Տէրըն տացէ իւր վարձ բարի,  
 Այլ և զհղբայրս իմ ցանկալի՝ զՏէր կարապետ սիրող բանի,  
 Ի Տիւրիկայ քաղաքացի, մեզ աւգտակար և կարելի,  
 Չմիւս եղբայրս այս բաղձալի՝ զՏէր Յովանէս հոգով բարի,  
 Ի գաւառէս Դարանաղի՝ դարան եղեալ մեզ և տեղի.  
 ՉՏէր Մաթէոս Սեբաստացի՝ վարս ստացեալ երկնաւորի,  
 Աւգուտ եղբարց և սիրելի, կապող կաղմող այսմ բանի,  
 Այլ և զՆերսէսն Հաղբատացի, զՆիկողայոսն Պոնտացի,  
 Թողեալք զտունս հայրենի՝ ըստ հրամանի Տեառն Յիսուսի.  
 Այս աշակերտքն են ի կարգի, ծարաք ջրոյն կենաց տըւողի,  
 Եկեալք յաղբերն իմանալի, զոր արբուսցէ Տէրըն բարի,  
 Այլ և զհայրս անապատի սրբոյ ուխտիս հռչակելի՝  
 Ըզտէր Յովսէփս, որ աշխատի՝ ի Գրիստոսէ զվարձս ընդունի,  
 Չեզկելիէլն շնորհալի և զՅոհանէսն ցանկալի,  
 ԸզԱւետիքն հեղահողի՝ վարուք մաքուրք և գովելի.  
 Այլ և զՊետրոս Մարընդունի և զՊաւլոս նոր աղաւնի,  
 Եւ զԱնդրէասն Պոնտացի և զԱշատուրն Եզընկացի.  
 Չփոքրիկ Ներսէս Տիւրիկեցի և զՅոհանէս նոյն գաւառի,  
 Չսարկաւագունքս հրաշալի՝ ըզՄկրտիչն և զԳորգն արի,  
 Այլ զգործաւորքն, որ կան աստի, և ըզտնտեսն ծերունի,  
 Չսարկաւագունքս ի մի կարգի մինչ ի յետինքն յիշեալ լիցի.  
 Չորոց զանուանս գրեցի և զորս գրել ոչ կարացի,  
 Եւ դուք, որ գայք զմեր կնի՝ գրեալք ի գիրն կենդանի.  
 255r. Որք որ յիշէք զմեզ ի բարի և որք չյիշէք փութանակի՝  
 Յիշեալ լիջիք ի յատենի ամենասուրբ Թագաւորի,  
 Ի սոցանէ որ թուեցի, ոմանք արեք են և արփի,  
 Ոմանք լուսինք՝ պարք աստեղի, աստղըն քան պատղն է աւելի  
 Ոմանք խոյանք քաջախոյի և այլք ոչխարք մաքուր հաւտի,  
 Ոմանք գառինք են ցանկալի՝ կան ի գաւիթըս Գրիստոսի,  
 Այլ և ծաղկունք են հրաշալի, ոմանք վարդունք են փթթալի,  
 Ոմանք շուշան անապատի և այլք ծաղիկ բուրաստանի,  
 Իբրև զլահ անշիջելի կան գումարեալ ի լապտերի,  
 Ծագեն զլոյս ամենայնի ի տուընջեան՝ լի գիշերի  
 Իբրև զակունքն են ի կարգի, որ ի վակաս պատմուճանի,  
 Եւ գաւազանն Ահարոնի՝ ծաղկեալք սիրովն Գրիստոսի,  
 Իբրև զաղբիւրք են տենչալի, իբրև զպարտեզս ջրալի,  
 Իբրև զայգի են պողալի, տան զպտուղ միշտ ի ծամի.  
 Այլ ամենայն բարեօք իլի բարգաւաճեալ են ի յօգի,  
 Իբրև զգանձն ագարակի ծածկեալ ունին զվարըս բարի,  
 Փոքր ի շատէ զայս գրեցի ձեզ աւրինակ, որ զմեր կնի,  
 Այլ ի պատճառ յիշատակի, ձեզ յիշողաց մասըն բարի.

Զմիւս եղբայրս հրաշալի, զոր ի վերոյ զանց արարի՝  
 ԶՏէր Գրիգոր Մաւրոկացի յիշման առէք զսա արժանի.  
 Այլ և գլխունեալ յամենայնի, որ ախտացեալ եմ ի յողի,  
 ԸզՍտեփանոսս անարժանի, մեղաւք լցեալ և եղկելի,  
 Յիշման առէք զիս արժանի, մանկունք լուսոյ առաքապտի.  
 Զձեզ աղաչեմ ես ի յոգի՝ ինձ ողորմած լերնէք ճրի.  
 Զեղբաւորդիս իմ սիրելի, որ Յովհանէս անուն կոչի՝  
 Նոր ընծայեալ Տեառն Յիսուսի, յիշման առէք զսա արժանի:  
 255v. Այլ և զհայրն իմ ասորի, որ ուղղափառ, գործով բարի,  
 Զփոխեալն ի Տէրն ամենայնի, Կաւրէլ անուամբն յորջորջի,  
 Զոր նայ եղև պատճառ բարի այս ուղղափառ սուրբ կրաւնի,  
 Ետ զիս յուսումն այս ցանկալի՝ ձեր աղաւթիւք Տէրն ողորմի:  
 Այլ և զմայրն իմ հայազգի և զեղբայրս բարաւք բարի  
 Եւ զամենայն արեան առի՝ յիշեալ լիցին ի ձէնջ բարի:  
 Այլ զուսուցիչն իմ ի կարգի ի յառաջին այբուբենի  
 Մինչ ի վերջինն, որ վախճանի, յեշեալք լիցին յաւրն ատենի:  
 Այլ և բոլոր ազգքս բարի քրիստոնէից ուղղափառի,  
 Որ երախտիք առ մեզ ունի, 'ւորք որ չունին՝ թող յիշեսցի.  
 Եւ որք աւրհնեն զմեզ աւրհնեսցի 'ւորք որ չօրհնեն թող աւրհ-  
 նեսցի.  
 Աւրհնեալ է Հայրն, աւրհնեալ Որդի, աւրհնեալ Հոգին սուրբ  
 և բարի,  
 Ի յէակացս ամենայնի միշտ աւրհնութիւն անլուելի:

Արդ գրեցաւ սա ձեռամբ անարժանիս, ստորուկ տրուպ հիբիս  
 և թշուառիս, զոր ի վերոյ ասացաք, ի սուրբ ուխտս ի յԱւագ վանքս,  
 ընդ հովհաննաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ Կարապետիս և  
 սուրբ առաքելոցն և այլ բազմահաւաք սուրբ նշանացս, առ ոտս  
 սուրբ և հրաշալի վարդապետիս, ի յեշատակ վարդապետիս և մեր  
 թշուառ անձինս, ի թուականիս ԶԺԳ, յունիս ամիս ԺԴ, ի յաւր  
 հինգշաբթի, ի դառն և դժար ժամանակի, զոր անաւրէն ազգն  
 Տաճկաց զաւրացեալ կան ի վերայ քրիստոնէից և պահեն ի հալա-  
 ծանաւ Այլ և չար դարձան քան զգազան և ծարաւիք են քրիստո-  
 256r. նէից արեան, | և նոր ի նորոյ չար յայտենն քրիստոնէից, զի  
 զիսարաճն դ. ֆլորի արարին և կապուտ արկին ի գլուխ քրիստո-  
 նէից և զմեռեալն ի քաջ տան տանել, և այլ չարիք բազում խոկան  
 և խորխտան ի վերա քրիստոնէից, զոր Տէր Աստուած զաւարտն ի  
 բարին առնէ:

Այլ և բազում արհաւիրք եղեն ի մերում ժամանակիս. զի  
 առաւ Ստրմպաւ քաղաք և ի սուր սուսերի մաշեցաւ ընակիւնքն

նորա և դերի վարեցաւ անթիւ, և անհամար նշխար սրբոցն տա ոտս անաւրինաց կոխան եղև և եկեղեցիք անաւրինաց եղևն ընակութիւն, և այլ բազում արհաւիրք եղևն, որ ռժ կարէ ընդ գրով արկանել: Եւ յետ ժ. ամաց՝ կամ պակաս, առաւ Պոնտոս, որ է Տրապիզոն, և այն Հափով վնաս ի նոյն գործեցաւ, զի բաժանէին զօրդիան և զգտներս ի մարց և ի հարց և զեղբայր յեղբարց, և աղիողորմ էր լացն և աղաղակն, զոր ոչ կարեմ գրով արկանել, և զեկեղեցեացն և զսրբութեանցն զվնասն, որ եղևն, ռժ կարէ թուել:

Այլ յառաջ քան զայս ժ. ամաւ գերեցաւ գաւառս Դարանաղեաց, որ է Կամախ, որ ռժ կարէ պատմել զաւերն և զպակասն, որ եղևն քրիստոնէից և վանօրէից և սրբութեանցն: Այլ և յետ սորին Ե. ամաւ եկաւ ահագին շարժ և աւերեաց զբոլոր մայրաքաղաքն զԵզրնկայ. բժան ռ ընդ այր և ընդ կին ի ներքոյ հողին մնացին: Եւ այլ բազում աւերք և վնասք, որ եղևն ի վրաց տուն, ի յԱրևելք և ի բոլոր գաւառս, ռժ կարէ պատմել կամ ընդ գրով արկանել: Այլ այս գրեցաւ ձեզ ի խրատ և ի յաւգուտ. զի վասն մեղաց եղևն այս ամենայն, զոր Տէր Աստուած փրկեացէ զձեզ ի յամենայն փորձութեանց. ամէն: Եւ որ զմեզ յիշէք՝ յիշեալ լինիք ի Բրիստոսէ Աստուծոյ մերոյ, ամէն:

